ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 մարտի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

38
(2888)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՀ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐՑԱԿԱՆԻ ՏԱԿ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 16-ին Դիլիջանում Տնտեսական քաղաքականության խորհրդի նիստում հայտարարեց. «Եթե մենք բուհերը հավատարմագրենք միջազգային ստանդարտներով, ոչ մի բուհ հավատարմագրում չի ստանա»: Բանն այն է, որ մարտի 7-ին Երեւանի պետական բժշկական համալսարանին հանձնվել է միջազգային հավատարմագրման հավաստագիր, իսկ ՀՀ պետական տնտեսագիտական համալսարանի որոշ ֆակուլտետներ փորձեր են անում դիմել եւ ստանալ միջազգային հավատարմագրում: Այս իրավիճակում ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանը հարցականի տակ է դնում հայկական բուհերի որակական հատկանիշները, այսինքն՝ Հայաստանում բուհերի մակարդակն այնքան ցածր է, որ միջազգային հավատարմագրման շեմը չեն հաղթահարի: ՀՀ ակադեմիական կրթությունը հարցականի տակ դրած վարչապետի կողքին նստած էր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, որն այս հայտարարությունների ընթացքում ոչ մի ձայն չհանեց, մինչդեռ հենց նրա ներկայությամբ էր ՀՀ ԵՊԲՀ-ն օրեր առաջ արժանացել միջազգային հավատարմագրման, շատ բուհեր էլ այդ ճանապարհին են: Հիշեցնենք, որ նույն այդ միջոցառման ընթացքում նախարարը նշել էր. «Շատ կարեւոր է այս աշխատանքը նաեւ գնահատել, կարեւոր է ստանալ աշխատանքի գնահատականն այն հավաստագրի տեսքով, որն այսօր փոխանցվեց»: Նախարարը շնորհավորեց համալսարանականներին, սակայն ՀՀ վարչապետին չհուշեց, որ չարտաբերի նման ամոթալի մտքեր: Ըստ երեւույթին, նախարարը լռում էր, որ ցնցուղի պատմության պես մի նոր սկանդալ իր շուրջը չհասունանա: Հավելենք նաեւ, որ Ժաննա Անդրեասյանի ղեկավարած ոլորտը աստիճանաբար քաոսի է վերածվում: Բանն այն է, որ կրթության ռազմավարության մինչեւ 2030 թվականի ծրագրով սահմանված է՝ աշխարհի 500 թոփ համալսարանների շարքում 5 հայկական բուհ պետք է ունենա Հայաստանը: Խնդիրը նրանում է, որ նախորդ տարիներին 1000 թոփ բուհերի շարքում ՀՀ-ն ունեցել է 2 բուհ՝ Երեւանի պետական համալսարանը եւ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը: 2023 թվականին Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը դուրս է եկել այդ բուհերի շարքից, իսկ ԵՊՀ-ն զիջել է տեղը այլ համալսարանների՝ զբաղեցնելով 1081-րդ հորիզոնականը: Թե ինչպես է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը պատրաստվում 6 տարվա ընթացքում ունենալ 5 թոփ բուհ աշխարհի մակարդակով, երբ պատկերն այսպիսին է, իսկ ՀՀ վարչապետն էլ ակադեմիական կրթությունը բավարար որակյալ չի համարում, խիստ կասկածահարույց է:

Նիկոլ Փաշինյանը կրկին անհարմար դրության մեջ է դրել իր թիմակիցներին. ՔՊ-ականները չգիտեն՝ ինչ խոսել: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանի՝ Տավուշում արված վերջին հայտարարություններից հետո ՔՊ-ականները փակուղում են հայտնվել, չգիտեն՝ ինչ խոսել, ինչպես մեկնաբանել իրենց ղեկավարի հերթական աղմկահարույց հայտարարությունները: Չնայած իշխանությունները մինչ այս ամեն կերպ հերքում էին, թե Հայաստանը նոր տարածքներ է հանձնելու, ու վստահեցնում էին, որ նոր զիջումներ չեն լինելու, բայց երկուշաբթի օրը Նիկոլ Փաշինյանը Տավուշ կատարած այցի ժամանակ հաստատեց, որ սահմանազատում եւ սահմանագծում է իրականացվելու Տավուշում: «Մենք տեսնում ենք, որ սահմանազատման եւ սահմանագծման գործընթաց սկսելու իրական հնարավորությունը կարող ենք իրականացնել Բաղանիսից Բերքաբեր ընկած հատվածում»,- նշել էր նա: Ավելին՝ ինչպես լրատվամիջոցների հետ զրույցում հանդիպման մասնակից քաղաքացիներն էին «գաղտնազերծել», Փաշինյանը հերթական անգամ վախեցրել է տեղացիներին, թե եթե զիջումների չգնանք, Ադրբեջանը նոր պատերազմ է սկսելու: Իհարկե, բնակիչները խայտառակ վատ են խոսել Փաշինյանի հետ, իրենց խոսքերով՝ «ցեխն են թաթախել ու հանել»: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, իհարկե, դռնփակ նիստերից մեկի ժամանակ Փաշինյանը թիմակիցներին ասել է, որ պետք է աշխատեն մարդկանց հետ եւ բացատրեն, որ սահմանազատումը ենթադրելու է որոշ տարածքների հանձնում, բայց, ամեն դեպքում, ՔՊ թիմում միայն հաշված թվով մարդիկ են տիրապետում իրական վիճակին: Սրա մասին վկայում է նաեւ իշխանական պատգամավորների խուճապահար պահվածքը. երբ լրագրողները նրանց մոտենում եւ մեկնաբանություն էին ցանկանում Նիկոլ Փաշինյանի այս հայտարարությունների վերաբերյալ, նրանք, մեղմ ասած, փախչում էին, որպեսզի խուսափեն իրենց ուղղված հարցերին պատասխանելուց: Նրանք բոլորը հավաքական իմաստով ոչ միայն պատասխանատու են այս իրավիճակի համար, այլեւ ուղղակի երկրի հանձնման գործընթացին մասնակից են՝ անկախ իրենց իմացությունից:

Նիկոլ Փաշինյանի՝ Տավուշ վերջին այցն իրականում մեկ նպատակ է հետապնդել՝ վախեցնել մարզի բնակիչներին ու պատերազմի սպառնալիքի ներքո նոր զիջումների պատրաստել քաղաքացիներին: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ երկուշաբթի օրը՝ Փաշինյանի՝ Տավուշ այցից հետո, մարզում խուճապային տրամադրություններ են առաջացել: Բանն այն է, որ Փաշինյանը քաղաքացիներին վախեցրել է՝ եթե Ադրբեջանի պահանջած գյուղերը չտանք, ապա Ադրբեջանը Ոսկեպարի կողմից է հարձակվելու Հայաստանի վրա, Թուրքիան՝ Արմավիրի: Ասել է նաեւ, թե մեր բանակը ունակ չէ պայքարելու թուրքական բանակի դեմ, այսինքն՝ Փաշինյանի ասածն այն է, որ պետք է կատարենք թշնամու բոլոր ցանկությունները, որպեսզի պատերազմ չլինի: Իսկ թե դրա արդյունքում հայրենիքի մնացորդից էլ ինչ կմնա, պարզ չէ: Ահա այս հայտարարությունները լուրջ անհանգստություններ են առաջացրել տեղացիների մոտ: Այսինքն՝ ստացվում է՝ Նիկոլ Փաշինյանը ծրագրված գնացել է Տավուշ, որպեսզի կոտրի ու թեւաթափ անի քաղաքացիներին, ու այնպիսի հայտարարություններ է արել, որ նրանք նոր պատերազմի սպառնալիքի ներքո համաձայնեն նոր զիջումներին, ու բողոքի ալիք չբարձրանա: Ողջ նպատակն այն է, որ մարդիկ չբողոքեն, հանրահավաքներ չանեն, եւ իր իշխանությունը չերերա:



«Ժողովուրդ» օրաթերթը դիմել էր ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին եւ կոնկրետ հարցադրումներ էր արել: Մասնավորապես, 2024 թվականի փետրվարի 12-ին սեփական նախաձեռնությամբ փոխել էին Աժ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կնոջ՝ Անի Գեւորգյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը: Խնդրել ենք հայտնել, թե այլ քրեական վարույթներով քանի նմանօրինակ մարդասիրական քայլ են դրսեւորել եւ սեփական նախաձեռնությամբ խափանման միջոց փոխել. «1. Եթե կան նման նախադեպեր, կխնդրեմ ներկայացնել օրինակները: 2.Իսկ եթե չկան նախադեպեր, խնդրում եմ հայտնել, թե ինչու ձեր մարդասիրությունը արթնացավ հենց պետական բարձր պաշտոն զբաղեցնող Աժ նախագահի մեծ ընտանիքի անդամի քրեական վարույթով»: Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի հարցադրումների՝ ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացրել են, որ 2018- 2023 թվականների ընթացքում իրավասու դատախազների կողմից սեփական նախաձեռնությամբ կայացվել է որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացնելու մասին 429 որոշում, որից 147-ը՝ 2018 թվականին, 137-ը՝ 2019 թվականին, 73-ը՝ 2020 թվականին, 14-ը՝ 2021 թվականին, 18-ը՝ 2022 թվականին, 40-ը՝ 2023 թվականին: Իհարկե, Աննա Վարդապետյանին ուղղված հարցադրումների պատասխանում չկա խոսք այն մասին, թե անձամբ Աննա Վարդապետյանը քանի հոգու նկատմամբ է մարդասիրություն դրսեւորել, եւ քանիսն են կալանքից ազատվել: Վիճակագրությունը, որ ներկայացվել է, խիստ մտահոգիչ է, քանի որ 2018 թվականին եղել է 147 կալանքից ազատում, 2023-ին՝ 40:

ԶՐՈՒՅՑ

«ԴՊՐՈՑԸ ՓԱԿԵԼ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԳՅՈՒՂԸ ՓԱԿԵԼ»

ԿԳՄՍ նախարարությունը ղարբերաբար կրթության ռազմավարության վերաբերյալ մշակած նոր ղլաններ է ներկայացնում: ArmLur.am-ը զրուցել է ՀՀ ԿԳՄՍ նախկին նախարար, այժմ ՀՀ նախագահի խորհրդական Վահրամ Դումանյանի հետ, բնարկել ենք ԿԳՄՍ նախարարության կողմից հանրակրթության ոլորտի խնդիրների եւ բարեփոխումների մասին հարցերը:

Վահրամ Դումանյանը ArmLur.am-ի հետ զրույցում նշել է, որ համաձայն չէ այն նախագծի հետ, որի շրջանակներում գյուղական դպրոցների ազատ հաստիքներում ուսուցիչների պետք է փոխարինեն համալսարանի վերջին կուրսի ուսանողները: ՀՀ նախագահի խորհրդականը պնդում է, որ հանրակրթության ոլորտը հոգատարության կարիք ունի, ինչպես երեխան:

-Պարոն Դումանյան, նշեցիք, որ կրթության ռազմավարությունում կան կանոններ գյուղական դպրոցների վերաբերյալ, նշեցիք, որ գյուղական դպրոցներ չկան, սակայն մտցվել է այդ տերմինը հանրակրթության ոլորտում: Ի՞նչ խնդիրներ են առաջ գալիս:

-Բուհական համակարգը համեմատաբար ինքնուրույն է, հանրակրթությունը՝ հակառակը, այն ավելի խնամքի կարիք ունի: Դպրոցները շատ են քանակով, 1300-1400 դպրոց ունենք, բայց բովանդակությունը, մեծ հաշվով, նույնն է. բոլորը դպրոց են: Բուհերը մի քանիսն են, բայց ներսում բազմաբովանդակ են՝ տարբեր մասնագիտություններով, այսինքն՝ բովանդակությունն է բարդ: Դպրոցի քանակը շատ է, բովանդակությունը՝ հստակ: Մեր ռազմավարությամբ՝ դպրոցը դպրոց է. գյուղական, քաղաքային տարբերակում չունենք, եւ հասանելի պիտի լինի որակյալ կրթությունը բոլորին: Սա մեր սկզբունքային կետն է, բայց ինչքան էլ մենք սկզբունքային սահմանենք մեր թիրախը, այն իրականություն չի դառնա, եթե մենք չապահովենք դրա գործողությունը: Մենք գիտենք՝ մարզերում, սահմանամերձ շրջաններում դպրոցները չենք կարող համեմատել այստեղի Ֆիզմաթ դպրոցի կամ այլ դպրոցների հետ. մենք միջին մակարդակը այսօր չենք կարողանում ապահովել: Այդ թիրախին մենք պիտի հասնենք՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաները. այլ լուծում չկա: Դպրոցը իրավունք չունենք փակելու, դպրոցը փակել նշանակում է գյուղը փակել. չի կարելի: Դպրոցի գոյությունը ռազմավարական, քաղաքական խորը իմաստ ունի մեզ համար: Նույնիսկ երբ համակազմով միացնում ենք դասարանները, այդ պայմաններում մենք դպրոցը պիտի պահենք, բայց պիտի բովանդակություն էլ հաղորդենք դպրոցին. ուսուցիչն է տալիս այդ բովանդակությունը: Մենք օբյեկտիվորեն ունենք խնդիր ուսուցիչների: Երկու խնդիր կա՝ որակի եւ քանակի, այսինքն՝ կա ուսուցիչ, բայց կարծես մենք կուզեինք՝ նա ավելի լավ որակներով մտներ դասարան, եւ կա, որ ուղղակի ուսուցիչ չկա: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը. աշխարհն այսօր շատ նվաճումներ ունի այդ ասպարեզում: Նախ՝ մենք Քովիդի ժամանակ ենք օգտվել հեռավար ուսուցման հնարավորությունից. երկու խնդիր կա՝ կրթության կազմակերպում եւ կրթության բովանդակություն: Կազմակերպումը տեխնոլոգիաների միջոցով բարդ բան չէ, բոլոր մեր դպրոցներում կա ինտերնետ: Մենք ունենք թոփ ուսուցիչներ, որոնք կարող են հեռավար դասավանդել: Երկրորդ՝ հայտնի ընկերություններն ունեն հարթակներ կրթության կազմակերպման, մասնավորապես՝ «Գուգլ»-ը ունի, եւ ես որքան տեղյակ եմ, մեր առաջատար SS ընկերություններից մեկը առաջարկ է ներկայացրել մեր երկրին անվճար տրամադրել այդ «Գուգլ»-ի հարթակը: Ամեն ինչ միանգամից հնարավոր չէ, բայց սա է ուղղությունը. այլ ճանապարհ չկա:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

«ԶՐՈՅԱՑՆԵՆՔ ՎԱՐԿԵՐԸ»

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է

2018 թվականի ապրիլի 15-ին Հանրապետության հրապարակում ունեցած ելույթի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց.



«Այսօր ՀՀ քաղաքացիները գտնվում են գերության մեջ: Այսօր ՀՀ տասնյակ, եթե ոչ հարյուր հազարավոր քաղաքացիներ բառի բուն իմաստով զրկվում են բանկային ժամկետանց տոկոսների տակ: Մենք կարծում ենք, որ միանշանակ եւ աներկբա պետք է զրոյացնել բոլոր ժամկետանց տուգանքները բոլոր սպառողական եւ գյուղատնտեսական վարկերը: Առանց բացառության բոլոր»: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց իրավիճակը եւ չգտավ որեւէ դեպք, երբ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը որեւէ քաղաքացու ազատել է գերությունից: Ավելին՝2020 թվականի մայիսի 25-ին ՀՀ Ազգային ժողովում հարց ուղղվեց Նիկոլ Փաշինյանին վարկային արձակուրդ հանրությանը տրամադրելու համար, քանի որ կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումների պարագայում մարդիկ չեն աշխատում, որ վարկերը վճարեն, հայտնվել են դժվար իրադրության մեջ: ԲՀԿ խմբակցության պատգամավորը Փաշինյանին կոչ արեց որոշում կայացնել վարկային արձակուրդ տրամադրել, տոկոսների սառեցում, չեզոքացում, քանի որ կան 500 հազար սպառողական վարկեր, որոք մարդիկ չեն կարողանում վճարել: Նիկոլ Փաշինյանը պատասխանեց. «Ուղիղ ասեմ՝ դեմ եմ նման որոշումներին: Հեշտ է ասելը՝ եկե՛ք ազատենք, հարկերից ազատենք, վարկերից ազատենք, սնունդ բաժանենք, կոմունալները չվերցնենք: Հեշտ եք ասում, տենց ասելով չէ: Պետք է խոսքի արժեքին էլ հետեւել: Նստում, ասում են՝ հարկերը թողե՛ք, վարկերը թողե՛ք, էս օգնե՛ք. ձե՞ռ եք առնում: Նենց տպավորություն է, որ դուք բաժանողն եք, մենք էլ թույլ չենք տալիս: Ես դեմ եմ նման բաների: Գնացե՛ք ձեր շրջապատի, միջավայրի հարստությունը բաժանեք մարդկանց վաբշե, հերիք ա»:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԹԱՓԵՑՆՈՂ ՀԻՇԵՑՈՒՄ Է

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգն անդրադարձել է ռուս-ուկրաինական պատերազմին:

Ստոլտենբերգը թեմային անդրադարձավ Երեւանում Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպումից հետո՝ հայտարարության ժամանակ:

«Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմը սթափեցնող հիշեցում է, որ չենք կարող խաղաղությունը չգնահատել: Ես ողջունում եմ ձեր համերաշխությունն Ուկրաինայի հետ եւ բոլոր գործընկերներին կոչ անում անել իրենցից կախված ամեն ինչ, որ Պուտինը չհաղթի իր պատերազմում»,-ասաց նա:

Ստոլտենբերգը հավելեց՝ մարտադաշտում իրավիճակը մնում է ծանր, այդ պատճառով էլ պետք է ոչ թե պակասեցնել, այլ ավելացնել աջակցությունն Ուկրաինային:

«Եթե Պուտինը Ուկրաինայում հաջողության հասնի, իրական ռիսկ կա, որ նրա ագրեսիան այնտեղ կանգ չի առնի, եւ ավտորիտար այլ սուբյեկտները կոգեշնչվեն դրանից»,-ասաց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ–ՔՆՆԱՐԿՈՒՄ

Բելգիայի Սենատում մարտի 25-ին տեղի կունենա «Աշխարհաքաղաքական զարգացումները Հարավային Կովկասում. կիզակետում Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը» խորագրով կլոր սեղան- քննարկում, որի նպատակն է վերլուծել Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական զարգացումները 2020 թվականի սեպտեմբերից ի վեր, այս համատեքստում Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը եւ Հայաստանի Հանրապետության առջեւ ծառացած մարտահրավերները:

Բրյուսելում կլոր սեղանի գլխավոր բանախոսներն են լինելու Բելգիայի դաշնային խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ Էլս Վան Հուֆը, միջազգային բանակցությունների վերլուծաբան, Clingendael ինստիտուտի համահիմնադիր Փոլ Մերթսը, գրող, դիվանագետ Օլիվյե Վեբերը եւ Լեռնային Ղարաբաղի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը:

Բանախոսները լույս կսփռեն տարածաշրջանում զարգացումների վրա՝ միջազգային, մարդու իրավունքների տեսանկյունից, կվերլուծեն միջազգային հանրության արձագանքը, մասնավորապես՝ Եվրամիության դերը: Քննարկման մասնակիցները կխոսեն նաեւ ապագայի հեռանկարների, առկա իրավիճակից ելքերի եւ անհրաժեշտ հստակ քայլերի մասին, որոնք պետք է ձեռնարկվեն՝ պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի եւ արցախահայության անքակտելի իրավունքները:

ԻՐԱՎԻՃԱԿ

Ո՞Ր ՔԱՐՏԵԶՆԵՐՈՎ

Շատ կարեւոր է Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից որոշում կայացնելը, թե որ քարտեզներով են առաջնորդվում սահմանազատման գործընթացի համար:

Լրագրողների հետ զրույցում այս մասին ասաց Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը:

Թորոսյանը նախ կարեւորեց սահմանազատման գործընթացը սկսելը: Նրա կարծիքով՝ Հայաստանի շահերից է բխում այն սկսելը:

«Ի վերջո, ո՞ր քարտեզներով ենք անելու սահմանազատումը. մեզ համար դա շատ կարեւոր եւ սկզբունքային հանգամանք է: Եվ բանակցությունների ընթացքում բազմիցս հայտարարվել է, որ շատ կաեւոր է երկկողմանի որոշում կայացնել, թե որ քարտեզներով ենք առաջնորդվում: Եվ այդ որոշումը տրամաբանորեն պետք է նշանակի, որ եթե մի հատվածում իրականացնում ենք սահմանազատում, օրինակ, 1974 թվականի քարտեզով, նշանակում է, որ մյուս հատվածներում էլ պետք է իրականացվի այդ քարտեզով»,-ասաց Թորոսյանը:

Նա շեշտեց՝ ԽՍՀՄ նախկին հանրապետությունները, միանալով Ալմա-թիի հռչակագրին, ճանաչել են իրենց սովետական վարչական տարածքները որպես պետական սահմաններ, եւ դրա հիման վրա պետք է կատարվի սահմանագծումն ու սահմանազատումը: Դա չի նշանակում նոր սահմանի ստեղծում, դա փաստացի եղած սահմանի իրավական ամրագրումը պետք է լինի:

«Որեւէ վարչական բնակավայր, որեւէ տարածք, որ Սովետական Հայաստանի սահմաններում է եղել, մենք որեւէ կերպ չենք պատրաստվում որեւէ երկրի տալ: Իսկ եթե սահմանը գծման կամ իրավական ամրագրման ընթացքում կանցնի որեւէ տարածքով, որն այս պահին այս կամ այն կողմի տիրապետության տակ է, պետք է փոխադարձաբար երկու կողմերի միջեւ պայմանավորվածությամբ վերադարձվի այս կամ այն կողմին»,-ասաց պատգամավորը:

Թորոսյանը շատ կարեւորեց, որ ի սկզբանե պայմանավորվածություններ ձեռք բերվեն, թե որ քարտեզներով են կողմերն առաջնորդվում: Նա նման պայմանավորվածություն ձեռք բերելու հնարավորություն տեսնում է: «Ցավոք սրտի, մինչեւ օրս այդ պայմանավորվածությունը ձեռք չի բերվել հիմնականում Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշման պատճառով: Նրանք խուսափել են քարտեզների վերաբերյալ խոսակցությանը վերջնական պատասխան տալուց: Եվ եթե այս գործընթացը թույլ կտա մեզ պայմանավորվել քարտեզների մասին, որոնք ապագայում պետք է դառնան հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատման ու սահմանագծման հիմքը, դա մեզ համար կարեւոր է, մեր շահերից է բխում»,-նշեց նա:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱԿՆԿԱԼՈՒՄ Է ՆԱՏՕ-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշում է, որ ՀՀ-ն ակնկալում է միջազգային հանրության, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի հաստատակամ աջակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացին՝ հայտնի եւ երկուստեք համաձայնեցված սկզբունքների հիման վրա:

Փաշինյանն այս մասին ասել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ կայացած ճեպազրույցի ընթացքում:

Վարչապետ Փաշինյանը եւս մեկ անգամ հայտնեց Հարավային Կովկասում կայունություն հաստատելու՝ Հայաստանի Հանրապետության կառավարության տեսլականը եւ մոտեցումները:

«Վերահաստատում եմ բազմիցս հնչեցրած պատրաստակամությունը՝ կարգավորելու Ադրբեջանի հետ հարաբերությունները՝ բարձրագույն մակարդակում ձեռք բերված 3 սկզբունքների հիման վրա՝ միմյանց տարածքային ամբողջականության ճանաչում՝ Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա, համաձայն Ալմա-Աթայի հռչակագրի՝ Հայաստան-Ադրբեջան միջպետական սահմանի սահմանազատում՝ վերականգնելու համար 1991 թվականի ԽՍՀՄ փլուզման պահին գոյություն ունեցած սահմանը երկու հանրապետությունների միջեւ, ինչպես նաեւ տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակումը՝ դրանց անցման երկրների ինքնիշխանության եւ իրավազորության հարգմամբ, հավասարության եւ փոխադարձության սկզբունքների հիման վրա»,-ասաց Փաշինյանը՝ հավելելով, որ այս առնչությամբ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարին է ներկայացվել նաեւ թեմայի վերաբերյալ ՀՀ պատկերացումներն ամբողջացնող «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը:

Նիկոլ Փաշինյանը Գլխավոր քարտուղարին է ներկայացրել նաեւ սահմանային իրադրության հանդարտեցման համար հայկական կողմի բազմաթիվ առաջարկներն Ադրբեջանին:

«Խոսքը 1991 թվականի Հայաստան-Ադրբեջան սահմանագծից զորքերի հայելային հետքաշման, սպառազինությունների փոխադարձ վերահսկման, չհարձակվելու մասին պայմանագրի ստորագրման առաջարկների մասին է, որոնք մինչեւ օրս դրական արձագանք չեն ստացել պաշտոնական Բաքվից»,- ընդգծեց նա:

Վարչապետը Փաշինյանը նշեց, որ հայկական կողմը հավատարիմ է նաեւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման օրակարգին՝ հավելելով, որ Թուրքիայի հետ դեռեւս 2022 թվականին ձեռք բերված եւ հետագայում վերահաստատված պայմանավորվածությունների իրագործումը կարող է դրականորեն ազդել հարավկովկասյան տարածաշրջանում կայունության հաստատման վրա:

Յենս Ստոլտենբերգի հետ հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ ՀՀ զինված ուժերի բարեփոխումների օրակարգին:

«Ընդգծել եմ, որ այս գործընթացն ուղղված չէ որեւէ պետության դեմ եւ միտված է բարձրացնել Հայաստանի զինված ուժերի պաշտպանական կարողությունները՝ ապահովելու համար Հայաստանի տարածքային ամբողջականությունը, - եզրափակեց վարչապետը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԸՆԴՈՒՆԵԼ Է

Մարտի 19-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն ընդունել է Հայաստանում Չինաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. Ֆան Յոնգին:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը, Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը, Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Մերուժան Հարությունյանը:

Հանդիպման ընթացքում մարզպետը դեսպանին ներկայացրել է հնարավոր համագործակցության ուղղությունները, ինչպես նաեւ համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները: Քննարկվել են նաեւ Տավուշի մարզում կրթության ոլորտի, գյուղատնտեսության, զբոսաշրջության զարգացմանն ուղղված հարցեր:

Դեսպանն իր խոսքում վստահեցրել է, որ այս ոլորտների զարգացումն արդյունավետ կլինի, որովհետեւ Տավուշի մարզը զարգացման մեծ հնարավորություններ ունի:

Դեսպան Ն.Գ. Ֆան Յոնգը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար, նշել, որ ուրախ է կրկին այցելել Տավուշի մարզ:

Հանդիպման ավարտին ներկաները միմյանց են հանձնել հուշանվեր՝ ի նշան բարեկամության, որից հետո այցելեցին Վազաշենի եւ Ենոքավանի դպրոցներ, որտեղ Չինաստանի դեսպանատան աջակցությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր:

ՀԱՄԱԼՐՈՒՄ Է ԻՐ ԹԻՄԸ

Ընդդիմությունը, որը 2018 թվականից հետո պարբերաբար ընդվզումներ է ցուցաբերում ներկայիս իշխանությունների դեմ, համալրում է իր թիմը:

Ընդդիմադիր պայքարը թեւակոխում է ապակենտրոն փուլ, որտեղ ի հայտ են գալիս տարատեսակ ակտիվիստների կողմից հիմնած կուսակցությունները: Օրինակ՝ Անի Կարապետյանը հանրությանը հայտնի էր որպես Ռոբերտ Քոչարյանի աջակից, ապա «Որդիների կանչ» ՀԿ ակտիվիստ: Կարապետյանը ստեղծել է նաեւ կուսակցություն «Իմ պայքար, իմ հայրենիք» անվամբ:

Հիշեցնենք, որ դեռ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Անի Կարապետյանի կողմից հրապարակայնորեն բռնության կոչեր հնչեցնելու դեպքի առթիվ:

«Կառավարության շենքի դիմաց տեղի ունեցող հավաքի վերաբերյալ «Անի Կարապետյան» անվամբ ֆեյսբուքյան օգտատիրոջ կողմից իր էջում գրառումներ էին կատարվել, որոնք առերեւույթ պարունակում են բռնություն գործադրելու հրապարակային կոչեր: Մասնավորապես՝ հիշյալ անձն իր էջում գրել էր. «Պետք է վերցնել կառավարության շենքը եւ եւս մի քանի պետական նշանակություն ունեցող շենքեր, որից հետո իմանալ՝ սատկած Նիկոլը որտեղ է, գնալ սատկացնել նրան...»:

Նկատի ունենալով, որ վերոնշյալ գրառումներում առերեւույթ առկա են հանցագործության հատկանիշներ՝ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով, նախաձեռնվել էր քրեական վարույթ»,- ասված էր պաշտոնական հաղորդագրության մեջ:

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մարտի 19-ին գումարել է հերթական նիստ: Նիստի օրակարգում Երեւանի քաղաքապետի՝ մարտի 15-ին ԿԸՀ ուղարկած արձանագրությունն էր, որի համաձայն՝ Երեւանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության անդամ Ամալյա Սարգսյանի լիազորությունները վաղաժամ դադարել են:

ԿԸՀ արձանագրությամբ՝ Երեւանի ավագանու անդամ է գրանցվել «Հանրային ձայն» կուսակցության համամասնական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Գրիգոր Անդրանիկի Հարությունյանը:

ԱՎԱՋԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՊՉՈՒՆ ԺԱՊԱՎԵՆՈՎ ԿԱՊԵԼ ԵՆ ՊԱՀԱԿԻՆ

Ավարտվել է «Վահագնի» ռեստորանային համալիրում տեղի ունեցած ավազակության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում իրականացված բազմակողմանի քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ Գյումրի քաղաքի 29-ամյա բնակիչը, 2021թ. ընթացքում տարբեր կարգավիճակներում աշխատելով «Վահագնի» ռեստորանային համալիրում եւ տեղյակ լինելով ռեստորանում գումարների առկայության, դրանց պահպանմանն առնչվող հարցերին, իր ծանոթ 40 եւ 44-ամյա տղամարդկանց տեղեկություններ է տրամադրել այդ մասին, որոնք մտադրվել են հափշտակել դրանք:

Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով 2023թ. օգոստոսի 5-ին՝ ժամը 04:00-ի սահմաններում, 29-ամյա երիտասարդն իր կողմից վարվող «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայով հիշյալ տղամարդկանց տեղափոխել է նշված ռեստորանային համալիրի հարակից տարածք: Այնտեղ վերջիններս, հագնելով սեւ դիմակներ եւ սեւ հագուստներ, ապօրինի մուտք են գործել նշված ռեստորանային համալիրի սրահ, կպչուն ժապավենով կապել են որպես պահակ աշխատող անձին՝ զրկելով դիմադրելու հնարավորությունից, եւ ատրճանակով սպառնացել են վնաս պատճառել նրա առողջությանը, եթե շարժվի: Այնուհետեւ հիշյալ տղամարդիկ նույն ռեստորանային համալիրից հափշտակել են գումար, բջջային հեռախոս, գինիներ եւ այլ իրեր՝ պատճառելով առանձնապես խոշոր չափի՝ ընդհանուր 5.025.800 ՀՀ դրամի գույքային վնաս:

Հանցավոր գործողությունները կատարելուց հետո 29-ամյա երիտասարդը նշված ավտոմեքենայով տղամարդկանց տեղափոխել է դեպքի վայրից, որից հետո հափշտակված իրերը վերջիններս պահել են իրենց ծանոթ, Երեւանի 39-ամյա բնակչին պատկանող, վերջիններիս բնակության վայր հանդիսացող տանը:

Քննությամբ պարզվել է նաեւ, որ 29-ամյա երիտասարդը, 44 եւ 40-ամյա տղամարդիկ ապօրինի ձեռք են բերել եւ պահել հրազեն հանդիսացող ատրճանակներ, ինքնաձիգ, տարբեր տրամաչափի փամփուշտներ, մարտական պայթուցիչ եւ մարտական ձեռքի նռնակ, ինչպես նաեւ 44-ամյա տղամարդը ապօրինի ձեռք է բերել եւ պահել զգալի չափերի «Հերոին» տեսակի, 40-ամյա տղամարդը՝ խոշոր չափերի, իսկ 39-ամյա տղամարդը՝զգալի չափերի «Մեթադոն» տեսակի թմրամիջոց, որոնք հայտնաբերվել են վերջիններիս բնակության վայրից:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 29-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-252-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, 44-ամյա տղամարդուն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, 335-րդ հոդվածի 1-ին մասով եւ 396-րդ հոդվածի 1-ին մասով, 40-ամյա տղամարդուն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, 335-րդ հոդվածի 1-ին մասով եւ 396-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ 39-ամյա տղամարդուն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով:

Մեղադրյալներից երեքի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԿԻՐԱՌԵԼ Է ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն դատարանը բավարարել է փաստաբան Լիոդարիս Սիմոնյանի միջնորդությունը եւ Կենտրոնի թաղապետարանի պաշտոնյաներից Ա. Հարությունյանի նկատմամբ կիրառել տնային կալանք ու 3 միլիոն դրամ գրավ:

Հիշեցնենք, որ իրավապահները կալանավորել են Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Տիգրան Ռաֆիկի Մարտիրոսյանին, նույն բաժնի առաջատար մասնագետ Արման Նվերի Հարությունյանին:

Ըստ նախաքննական մարմնի պաշտոնական տեղեկության՝ վերջիններս նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, ունենալով տեղական ինքնակառավարման մարմնի անունից հանդես գալու լիազորություն, ինչպես նաեւ նույն մարմնի անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձինք, Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքներն իրականացնող «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության տնօրեն Կամո Գերասիմի Գեւորգյանի նկատմամբ իրենց ծառայողական լիազորությունների իրականացման հետ կապված ընդհանուր բերեհաճ վերաբերմունքի համար 2023 թվականի հուլիսի 11-ին Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմի վարչական շենքում Կամո Գեւորգյանից ստացել են խոշոր չափերով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ կաշառք-գումար, որը վերջինս անձամբ տվել է Տիգրան Մարտիրոսյանին, որը ստացված կաշառք-գումարից 150.000 դրամը հաջորդ օրը փոխանցել է Արման Հարությունյանին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՎՏՈՎԹԱՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ԵՆ ՕԳՆԵԼ

Մարտի 19-ին խոշոր ավտովթար է տեղի ունեցել Արմավիրի մարզում: Ժամը 12:30-ի սահմաններում Երեւան-Արմավիր ավտոճանապարհի Ծաղկունք գյուղի վարչական տարածքում բախվել են «Lexus» եւ «LADA Priora» մակնիշի ավտոմեքենաները:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով 4 հոգի տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Վաղարշապատ» բժշկական կենտրոն:

Վիրավորներին առաջինը օգնության են հասել քաղաքացիները, օպերատիվորեն ժամանած ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Վաղարշապատի հրշեջ-փրկարարական ջոկատի փրկարարներն ու Վաղարշապատ բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբն ու ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Արմավիրի մարզի գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի պարեկները՝ վաշտի հրամանատար Արսեն Բաղդասարյանի գլխավորությամբ: Բժիշկները վիրավորներին մինչեւ հիվանդանոց տեղափոխելը տեղում առաջին բուժօգնությունն են ցուցաբերել: Վիրավորներից 3-ը, ըստ բժիշկների, գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում: Դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ Արթուր Բդոյանը, վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ Հովհաննես Արիստակեսյանը, ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետ Արսեն Ոսկանյանն ու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Գեւորգ Միքայելյանը: Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Արմավիրի մարզի գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Ղարիբ Գրիգորյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Հայկ Հակոբյանի, վաշտի հրամանատար Արսեն Բաղդասարյանի եւ դասակի հրամանատար Արա Պողոսյանի գլխավորությամբ: Պարեկների այսքան շատ ժամանման պատճառն այն էր, որ մինչ պարեկների ժամանումը հետաքրքրասեր քաղաքացիները ավտոմեքենաները կայանել էին, ու ստեղծվել էր արհեստական խցանում. պարեկների ժամանելուց վայրկյաններ անց երթեւեկությունը կարգավորվեց: Վթարի մասին ոստիկանության Վաղարշապատի բաժնից տեղեկությունը փոխանցել են Հայաստանի քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ վարչության պետ Հրաչ Ղազարյանի, Վաղարշապատի քննչական բաժնի պետ Դավիթ Բարոյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ, հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչի գլխավորությամբ: Քննիչի հանձնարարականով ավտոմեքենաները տեղափոխվել են ոստիկանության Վաղարշապատի բաժնի պահպանվող հատուկ տարածք: Մինչ դեպքի վայրում աշխատում էր քննչական խումբը, հիվանդանոցից ահազանգ է ստացվել ոստիկանության Վաղարշապատի բաժին, որ վիրավորներից 3 հոգի, գիտակցության չգալով, մահացել են: Վթարի փաստով Վաղարշապատի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ պարզվում է վարորդների, մահացածների եւ վիրավորների ինքնությունը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 18-ից մարտի 19-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 131 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՊԱՏՃԱՌԸ ՊԱՐԶՈՒՄ ԵՆ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան գյուղում գյուղացիներին պատկանող բազմաթիվ խոզեր հիվադանալով սատկել են: Գյուղացիները կասկածում են, որ անասունների անկման պատճառը խոզերի աֆրիկյան ժատախտ հիվանդությունն է: Մարտի 11-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին՝նրան հարցնելով՝ ներկայումս Տավուշի մարզի որ բնակավայրերում են խոզերի անկման դեպքեր, որ բնակավայրերում քանի խոզ է սատկել, անկման դեպքերը աֆրիկյան ժանտախտ, թե այլ հիվանդության հետեւանք են: Մարտի 18-ին Տավուշի մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «2024 թվականի հունվար ամսից Նոյեմբերյան համայնքի Կոթի եւ Բարեկամավան բնակավայրերում արձանագրվել են խոզերի անկման դեպքեր: Սահմանված կարգով անկված կենդանիներից վերցվել են փորձանմուշներ եւ ուղարկվել հանրապետական լաբորատորիա՝ անկման պատճառները ուսումնասիրելու նպատակով: Անկված կենդանիների գլխաքանակները եւ սեռահասակային խմբերը ճշտվում են: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել սննդամթերքի անվտանգության Տավուշի մարզային կենտրոն եւ Նոյեմբերյանի համայնքապետարան»:

ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ ՉԱՍԱՑ

Մարտի 18-ին՝ Ոսկեպարի մշակույթի տանը Ոսկեպարի, Ոսկեվանի, Բաղանիսի բնակիչների հետ հանդիպման ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ ինքը անկեղծ է խոսում, ասաց, որ Ադրբեջանը պնդում է, որ իրեն հանձնեն նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի տարածքները, ադրբեջանական զինուժի օկուպացիայի տակ է գտնվում Հայաստանի 31 գյուղերի տարածքներ, ադրբեջանցիներն իրենց ասում են, որ Հայաստանի վերահսկողության տակ գտնվող տարածքները գյուղերի բնակելի հատվածներ են, ադրբեջանական կողմը պնդում է, որ սկզբից հանձնվեն գյուղերի բնակելի մասերի տարածքները: Իրականում ադրբեջանական զինուժի օկուպացիայի տակ ոչ թե 31, այլ առնվազն 35 գյուղերի մեծ տարածքներ են գտնվում; Կառավարության կողմից հրապարակված այդ 31 գյուղերի ցանկի մեջ չկան Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բարեկամավան, Կոթի, Դովեղ, Բերդավան գյուղերը, որոնց մեծ տարածքները շուրջ 30 տարի գտնվում են ադրբեջանական օկուպացիայի տակ: Նիկոլ Փաշինյանը Ոսկեպարում չասաց, որ Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջեւան, Բերդ համայնքների բնակավայրերից մոտ 10 հազար հեկտար տարածք մոտ 30 գտարի գտնվում է Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ. ինչո՞ւ ինքը պահանջ չի դնում հայ-ադրբեջանական սահմանագծումն ու սահմանազատումը սկսել այդ տարածքների դեօկուպացիայից, այլ ցանկանում է Ադրբեջանին հանձնել նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի տարածքները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

ՀՈՒՋՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը հրապարակել է էլեկտրոնային դեղատոմսերի հետ կապված՝ հանրության կողմից ամենահաճախ հնչեցվող հարցերն ու մասնագետների պատասխանները:

Առանձնացրել ենք դրանցից 5-ը.

Արդյոք անձնական տվյալների գաղտնիությունը չի՞ խախտվում:

Էլեկտրոնային դեղատոմսի ներդրման գործընթացում պացիենտների տվյալները խստագույնս պաշտպանված են: Ոչ մի բժշկական գաղտնիք հասանելի չէ դեղատան աշխատակցին: Դեղագետը տեսնում է միայն դեղի անվանումն ու չափաքանակը, գնորդի նույնականացման տվյալները. ցանկացած այլ բժշկական տեղեկատվություն, այդ թվում՝ ախտորոշումը, դեղատան աշխատակցի համար տեսանելի չէ, քանի որ դեղատոմսում այդպիսի բաժին չկա:

Ալերգիայի դեպքում, երբ անձի ինքնազգացողությունը կտրուկ վատանում է, ի՞նչ անի, եթե իր դեղն էլեկտրոնային դեղատոմսով է ստանում:

Ալերգիայի սրացման դեպքում, երբ անձի ինքազգացողությունը կտրուկ վատանում է, ցանկացած դեպքում անհրաժեշտ է զանգահարել շտապօգնություն, քանի որ դեղը պետք է ներարկվի բացառապես բժշկի կողմից, նրա հսկողությամբ: Ինչ վերաբերում է հակաալերգիկ՝ հակահիստամինային դեղերին, ապա դրանցից ոչ մեկը դեղատոմսով չէ:

Եթե պացիենտն ունի հորմոնակախյալ հիվանդություն եւ մշտապես ընդունում է, օրինակ, վահանաձեւ գեղձի հորմոն, դեղն ինչո՞ւ է դարձել էլեկտրոնային դեղատոմսով:

Ցանկացած դեղ, անգամ եթե երկարաժամկետ ընդունման է, պահանջում է ժամանակ առ ժամանակ բժշկի խորհրդատվություն եւ հետազոտություններ, քանի որ երկարատեւ դեղ ընդունելու դեպքում կարող է առաջանալ թե՛ դեղը փոխելու, թե՛ դեղաչափի ճշգրտման անհրաժեշտություն:

Չկա մի դեղ, որը նշանակվում է միեւնույն դեղաչափով եւ առանց փոփոխության ամբողջ կյանքի ընթացքում: Ավելին՝ պացիենտը կարող է կյանքի ընթացքում ունենալ այլ հիվանդություններ, որոնց դեպքում կարող է վերանայվել նշանակված դեղը եւ դեղաչափը: Կա երկարաժամկետ դեղատոմսի հնարավորություն, որը թույլ է տալիս դուրս գրել դեղ՝180 օրվա համար, ինչի դեպքում ցանկալի է տարին առնվազն 2 անգամ բժշկի խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ հետազոտություն:

Էլեկտրոնային դեղատոմս լրացնելը չի՞ բարդացնում բժշկի աշխատանքը եւ ծանրաբեռնվածությունը:

Էլեկտրոնային եղանակով դեղի դուրսգրումը տեւում է 2-3 րոպե: Թղթային դեղատոմսը դուրս գրելը ոչ պակաս ժամանակատար է, ենթադրում է նաեւ մատյանների լրացում: Համակարգը նաեւ հնարավորություն է տալիս բժշկին նույն պացիենտի համար հաջորդ այցի ժամանակ ավելի արագ եւ մի քանի հպումով դուրս գրել դեղատոմսը: Բացի այդ, թղթերի, մատյանների, ստորագրությունների, կնիքների անհրաժեշտություն չի առաջանում, եւ պացիենտը բժշկի սենյակից ուղիղ դիմում է դեղատուն:

Շտապօգնության բժիշկը կարո՞ղ է դուրս գրել էլեկտրոնային դեղատոմս:

Շտապօգնության բժիշկը որեւէ դեղ դուրս չի գրում, քանի որ տվյալ պահին ախտորոշում իրականացնելը եւ երկարաժամկետ նշանակում անելը չի մտնում շտապօգնության բժշկի պարտականության մեջ: Նա տեղում գնահատում է պացիենտի վիճակը. եթե վերահսկելի է, ցուցաբերում է անհրաժեշտ բուժօգնությունը կամ կազմակերպում է հոսպիտալացումը համապատասխան բուժհաստատություն:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՆ ԸՆԹԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն ընդունել է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Արեւելյան գործընկերության տարածաշրջանում կրթական բարեփոխումներ եւ հմտություններ» ծրագրի փորձագետներին:

Ինչպես տեղեկանում ենք ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, ծրագրի շրջանակում իրականացվելու է հետազոտություն կրթական տարբեր մակարդակներում՝ համակարգի գնահատման եւ ոլորտում կարողությունների զարգացման նպատակով:

Հանդիպմանը քննարկվել են կրթական բարեփոխումների համատեքստում ԿԳՄՍ նախարարության առաջնահերթությունները, որոնք փորձագիտական խմբի հետազոտության եւ վերլուծության անհրաժեշտություն ունեն:

«Հայաստանում կրթական բոլոր մակարդակներում մեծածավալ բարեփոխումներ են ընթանում, եւ անհրաժեշտ է քննարկել հնարավոր ուղղությունները, որոնք հետազոտության անհրաժեշտություն ունեն: Արդյունավետ կրթական համակարգ ունենալու առումով մենք կարեւորում ենք միջազգային գործընկերների աջակցությունը»,- ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Նախարարի տեղակալը հակիրճ ներկայացրել է կրթության համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքը: Նրա խոսքով՝նախադպրոցական կրթական համակարգում ներդրվել են կրթական նոր չափորոշիչը եւ մանկավարժական կարողությունների զարգացման նոր ծրագրերը: Փոխնախարարն ընդգծել է՝այս տարվանից մեկնարկել է ՀՀ բոլոր դպրոցներում հանրակրթության նոր չափորոշիչի ներդրման գործընթացը:

«Մեզ համար կարեւոր իրադարձությունն էր Տավուշի մարզում չափորոշիչի փորձարկման արդյունքների գնահատումը Համաշխարհային բանկի միջազգային փորձագետների կողմից: Անկախ գնահատումը ցույց է տվել, որ Տավուշում կրթական արդյունքի 6 ամսվա դինամիկա ունենք՝ մյուս մարզերի համեմատ: Սա մեզ համար շատ հաջողված ցուցանիշ է»,- ասել է ԿԳՄՍ փոխնախարարը:

Ըստ Արաքսիա Սվաջյանի՝չափորոշիչի հիմնական նպատակը դպրոցներում կրթության որակի բարձրացումն է, եւ այս ուղղությամբ մի շարք գործընթացներ են իրականացվել, մասնավորապես՝ ներդրվել է ուսուցիչների կարողությունների զարգացման նոր համակարգ, վերանայվել է դպրոցների կառավարման մեխանիզմը՝ ուսուցման բովանդակային կառավարումն առանձնացնելով վարչատնտեսական մասի կառավարումից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԵՆ ՀԱՄՆՈՒՄ

Արցախի ժողովրդի կարիքների ապահովման նախաձեռնությունը (շուրջ 40 կազմակերպություն) մարտի 20-ին՝ 15:30-ին, Երեւան քաղաքի Ազատության հրապարակում կազմակերպելու է հանրահավաք, որի նպատակն է հիմնովին վերանայել ՀՀ կառավարության կողմից քննարկվող՝ Արցախի ժողովրդի բնակարանային կարիքների ապահովման ծրագրի նախագիծը, որը չի արտացոլում արցախցիների հավաքական շահերն ու նպատակները: Արցախ հավաքական վերադարձի հարցը գերակա համարելով՝ հանրահավաքի ժամանակ քննարկվելու եւ բարձրաձայնվելու է Արցախի ժողովրդի լայն շրջանակների առաջարկներն ու պահանջները թե՛ վերադարձի եւ թե՛ բնակարանային ու սոցիալական այլ ծրագրերի վերաբերյալ: Հանրահավաքի կազմակերպիչները կոչ են անում հայ ժողովրդի ու նրա արցախյան հատվածի ճակատագրով ու իրավունքների պաշտպանությամբ մտահոգ մարդկանց մասնակցելու հանրահավաքին: ArmLur.am-ը հասկանալու համար՝ ինչ տրամադրվածություն է արցախահայության շրջանում, զրուցել է մի քանի բռնի տեղահանված անձանց հետ, լսել նրանց կարծիքները հանրահավաքից սպասվող արդյունքների վերաբերյալ: Բռնի տեղահանված անձանց մի մասը հիասթափված է, ասում են. «Մեր ձայնը լսելի չէ ՀՀ իշխանության համար»: Արցախից բռնի տեղահանված 67-ամյա Ա.Ա.-ն ասաց. «Ինչ Երեւանում եմ, քանի հանրահավաք է եղել, մասնակցել եմ, որպեսզի իմ հարցերի պատասխանները եւս ստանամ, բայց անարդյունք: Պայքարում ենք, պայքարում ենք, արդյունքի չենք հասնում: Իշխանությունը անում է այն, ինչ ինքն է ցանկանում՝ առանց հաշվի առնելու քաղաքացուն: Հանրահավաքներից հիասթափված եմ. մարդիկ անտարբեր են երկրում ստեղծված իրավիճակով կամ էլ արդեն պայքարելուց թեւաթափ են եղել»:

ՓԼՈՒԶՎԵԼ Է

Մարտի 19-ին՝ ժամը 12-ի սահմաններում, թաց ձյան ծանրությունից փլուզվել է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Տիգրան Պետրոսյան փողոցի առանձնատներից մեկի տանիքը եւ առաստաղը՝ 25 քառակուսի մետր մակերեսով:

Ինչպես տեղեկացրեց Ճամբարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռոբերտ Օհանյանը, այդ բնակարանում էր բնակվում միայնակ տարեց կին՝ 1932 թվականին ծնված Մ.Չ-ն: Ստացված ահազանգից հետո դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից երկու մարտական հաշվարկ: Պարզվել է, որ մասամբ փլուզվել է տան տանիքը եւ առաստաղը. տուժածներ չկան: Փրկարարները փլուզված տան պատուհանից պատգարակով անվնաս դուրս են բերել Մ. Չ.-ին եւ սահմանազատել տարածքը:

«Բարեբախտաբար, տարեց կինը չի տուժել փլուզումից, նրան ժամանակավորապես իր մոտ բնակության է տեղափոխել հարազատներից մեկը»,- ներկայացրեց Ռոբերտ Օհանյանը:

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՀԱՆԳՐՎԱՆԻ ՀԱՄԱՐ

Արցախի ժողովրդի կարիքների ապահովման նախաձեռնությունը մարտի 20-ին՝ 15:30-ին, Երեւան քաղաքի Ազատության հրապարակում կազմակերպելու է հանրահավաք, որի նպատակն է հիմնովին վերանայել ՀՀ կառավարության կողմից քննարկվող՝ Արցախի ժողովրդի բնակարանային կարիքների ապահովման ծրագրի նախագիծը, որը չի արտացոլում արցախցիների հավաքական շահերն ու նպատակները:

Հանրահավաքի վերաբերյալ առավել մանրամասնություններ իմանալու համար ArmLur.am-ը կապ է հաստատել ԱՀ ԱԺ «Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանի հետ: «Այն պարտավորավածությունները, որ վերցրել է իր վրա «Արցախը Հայաստանն է եւ վերջ» կարգախոսի հեղինակը, այսօր արցախցիներին ՀՀ քաղաքացի չի համարում եւ մշակում է սոցիալական այնպիսի աջակցություններ, որոնք ավելի շուտ նպաստում են արցախցիների արտագաղթին: Հաշվի առնելով այն, որ արցախցիները չեն ուզում արտագաղթել եւ դեմ են այս իշխանությունների կողմից մշակված սոցիալական ծրագրերին՝ կազմակերպել ենք հանրահավաք, որտեղ հանրայնորեն կքննարկվեն ստեղծված խնդիրները: Մշակված ծրագրերը մեզ թույլ են տալիս մտածելու, որ այս իշխանությունները միտումնավոր չեն համագործակցում Արցախի պետական ինստիտուտների հետ եւ չեն ընդունում մեր առաջարկները: Նրանք այսօր ուզում են փակել Արցախի հարցը»,- ասաց Արցախի պատգամավոր Դավիթ Գալստյանը եւ հավելեց, որ Նիկոլ Փաշինյանի ջրաղացին ջուր չեն լցնելու, այլ անելու են ամենը իրենց ձայնը լսելի դարձնելու համար: Դավիթ Գալստյանի խոսքով՝ ՀՀ այս իշխանությունները արցախցիների պայքարը կարող են համարել նաեւ ներքաղաքական ինչ-որ իշխանության պայքար, սակայն, նրա խոսքով, պայքարը ոչ թե իշխանության համար է, այլ արժանապատիվ հանգրվանի: «Մենք իշխանության պայքար չենք մղում: Մեր նպատակն է, որ արցախցիները պայմաններ ունենան մնալ մայր Հայաստանում եւ բաց պահեն Արցախի հարցը: Այլապես առաջարկվող պայմանները արտագաղթի ճանապարհն են ցույց տալիս, իսկ արտագաղթելուց հետո ինքնըստինքյան կփակվի նաեւ Արցախի եւ Արցախ վերադառնալու հարցը»,- ասաց Գալստյանը: Անդրադառնալով բռնի տեղահանված արցախցիների հնարավոր ետվերադարձին՝ նա նշեց. «Ցավոք սրտի, այսօր վերադարձի վերաբերյալ ՀՀ իշխանությունների կողմից քայլեր չի ձեռնարկվում, փորձ չի արվում հարցը բերել բանակցային սեղան: Բռնի տեղահանված արցախցիների ետվերադարձման հարցը պիտի դրվի բանակցային սեղանին, եւ համապատասխան լուծում տրվի: Արցախի կառավարությունը, Վարդան Ոսկանյանի գլխավորությամբ, միջազգային ատյաններում հնարավորության չափով քայլեր է ձեռնարկում, որպեսզի կազմակերպվի արցախցիների ետվերադարձը: Ցավոք սրտի, այսօր չունենք ՀՀ իշխանությունների աջակցությունը, բայց շատ դժվարորեն սայլը տեղից շարժվում է: Հուսով ենք՝ բանակցություններով կհասնենք ցանկալի արդյունքի»,- ասաց Դավիթ Գալստյանը: Արդյոք համագործակցո՞ւմ են Արցախի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության կառավարությունները. ԱՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Գալստյանն ասաց. «Երբեւիցե Արցախի եւ Հայաստանի կառավարության միջեւ նման սառը, ոչ համագործակցային հարաբերություններ չեն եղել: Արցախի պետական ինստիտուտները բազմաթիվ հայտարարություններով, տարբեր ճանապարհներով փորձել են հանդիպումներ կազմակերպել՝ քննարկելու ստեղծված իրավիճակը եւ մի ընդհանուր լուծում գտնելու, սակայն, ցավոք սրտի, ՀՀ իշխանությունները, վախենալով Ադրբեջանից, մասնավորապես՝ Նիկոլ Փաշինյանը, ահուսարսափ ունենալով Ալիեւից, նման որեւէ տիպի հանդիպման չեն արձագանքել: Հենց այս վերաբերմունքն է, որ խնդիրը հասցրել է այն աստիճանի, որ այսօր մենք հրապարակայնորեն ենք քննարկելու մեր խնդիրները»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՆԱԽԿԻՆ ՄԻՊ

ԿՈՊԻՏ ՍԽԱԼՆԵՐՈՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը գրում է. «Տավուշում տեղի ունեցողը որեւէ առնչություն չունի պետական սահմանի դելիմիտացիայի կամ դեմարկացիայի հետ:

Սա անօրինական, միջազգային կանոններին հակասող գործընթաց է՝ մեր իրավունքների զանգվածային խախտումների եւ խաթարված անվտանգության հեռանկարով: Ադրբեջանն էլ այդքանով կանգ չի առնելու:

Տավուշի համայնքների հարեւանությամբ հայտնվելու են ադրբեջանական զինված ծառայողներ, որը բերելու է համայնքների մեկուսացման, միջպետական ճանապարհի տարբեր հատվածներ դառնալու են անօգտագործելի ու վտանգված, իսկ, այսպես կոչված, այլընտրանքային ճանապարհները չեն լրացնելու բացը: Վտանգվելու է հատկապես Տավուշով հայ-վրացական սահմանային հաղորդակցությունը:

Ռազմավարական օբյեկտներ (գազատարներ, ջրային ռեսուրսներ եւ այլն) հայտնվելու են ադրբեջանական թիրախի կամ վերահսկողության ներքո:

Լինելու են նոր տեղահանվածներ, մարդիկ զրկվելու են ազատ ու անվտանգ տեղաշարժվելու, ընտանիքի եկամուտը վաստակելու հնարավորությունից, անօգտագործելի են դառնալու արոտավայրեր, խոտհարքներ ու վարելահողեր, այգիներ, խաթարված է լինելու մարդկանց արժանապատվությունն ու հոգեկան անդորրը:

Այսինքն՝ տեղի է ունենալու այն, ինչ առկա է Սյունիքում, Վայոց ձորում ու Գեղարքունիքում՝ անվտանգության ընդգծված ռազմավարական խնդիրներով: Էլ չեմ խոսում համայնքների հարեւանությամբ պարբերական դարձած ադրբեջանական կրանոցների ու ականների պայթյունների մասին:

2020թ. նոյեմբերից սկսած՝ բոլոր հնարավոր եղանակներով անընդհատ ասել եմ, որ անվտանգությունը չի կարելի առանձնացնել մարդուց, որ մարդու իրավունքները պետք է դրվեն Հայաստանի դիվանագիտության, բոլոր միջազգային հարթակներում քննարկումների հիմքում: Սա կօգներ ամրապնդել Հայաստանի միջազգային պաշտպանությունը, այդ թվում՝ պետական սահմանները պաշտպանելով:

Ներկայում տեղի ունեցողն արդյունք է կոպիտ սխալներով քաղաքականության, որը միայն ուժեղացրել է ու շարունակում է ուժեղացնել Ադրբեջանին եւ թուլացրել Հայաստանի դիրքերը»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՕՍԿԱՐ»

ԱՄԵՆԱՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՌԵԿՈՐԴՆԵՐԸ

Կինոաշխարհի ամենահեղինակավոր «Օսկար»-ի մրցանակաբաշխությունը, որը սահմանվել է ամերիկյան կինոակադեմիայի կողմից, առաջին անգամ կայացել է 1929 թվականի մայիսի 16-ին Լոս Անջելեսի հոլիվուդյան «Ռուզվելտ օթել»-ում:

15 րոպե տեւած մրցանակաբաշխությանը մասնակցել է 250 հոգի, որոնք տոմս են ձեռք բերել՝ 5-ական դոլար վճարելով: Արարողության հանդիսավարն է եղել այն ժամանակ ամենաճանաչված ամերիկացի դերասաններից Դուգլաս Ֆերբենքսը:

Առաջին մրցանակաբաշխության ժամանակ տրվող մրցանակները «Օսկար» չեն կոչվել, այլ «Պատվավոր հիշատակում»:

«Լավագույն ֆիլմ» անվանակարգում առաջին «Օսկար»-ին արժանացել է «Թեւեր» համր ֆիլմը, որը նկարահանվել է 1927 թվականին եւ ընդգրկված է Ամերիկյան ֆիլմերի ազգային ռեեստրում:

Այսօր «Օսկար» մրցանակաբաշխության ընթացքում մրցանակ է տրվում հիմնական 24 անվանակարգերում, ինչպես նաեւ հատուկ մրցանակներ՝ «Օկար բացառիկ նվաճումների համար» եւ «Ջին Հերշոլտի անվան մրցանակ» անվանակարգերում:

Մրցանակաբաշխության անվանակարգերն են «Լավագույն ֆիլմ», «Լավագույն ռեժիսոր», «Լավագույն դերասան», «Լավագույն դերասանուհի», «Երկրորդ պլանի լավագույն դերասան», «Երկրորդ պլանի լավագույն դերասանուհի», «Լավագույն օպերատրական աշխատանք», «Լավագույն բնօրինակ սցենար», «Լավագույն ադապտացված սցենար», «Լավագույն մոնտաժ», «Լավագույն ձայնային մոնտաժ», «Լավագույն հնչյունավորում», «Լավագույն հնչյունավորում», «Լավագույն դիմահարդարում», «Լավագույն հանդերձանքի դիզայն», «Լավագույն բեմադրող նկարիչ», «Լավագույն երաժշտություն», «Լավագույն երգ», «Լավագույն վիզուալ էֆեկտներ», «Լավագույն օտարալեզու ֆիլմ», «Լաացագույն գեղարվեստական կարճամետրաժ ֆիլմ», «Լավագույն վավերագրական լիամետրաժ ֆիլմ», «Լավագույն վավերագրական կարճամետրաժ ֆիլմ», «Լավագույն անիմացիոն լիամետրաժ ֆիլմ» եւ «Լավագույն անիմացիոն կարճամետրաժ ֆիլմ»:

Նախկինում մրցանակներ են հանձնվել նաեւ անչափահաս դերասանին, պարուսույցին եւ ռեժիսորի օգնականին, ինչպես նաեւ լավագույն տիտրերի, բնօրինակ պատմության եւ նորարարության համար:

«Օսկար» մրցանակաբաշխության ընթացքում գրանցվել են բազմաթիվ ռեկորդներ եւ փաստեր, որոնցից կարելի է նշել հետեւյալները.

ամենաշատը «Օսկար» արձանիկ է ստացել Ուոլթ Դիսնեյը, որը 59 անգամ առաջադրվել է եւ ստացել 26 մրցանակ: Դերասաններից ամենաշատը «Օսկար»-ի է ներկայացվել Ջեք Նիկոլսոնը, որը 12 անգամ առաջադրվել է Օսկարի եւ 8 անգամ հաղթել, իսկ դերասանուհիներից ամենաշատը նոմինացվել է Մերիլ Սթրիփը՝ 21 անգամ եւ ստացել 3 մրցանակ:

«Օսկար»-ի մրցանակի արժանացած ամենատարեց դերասանը Քրիստոֆեր Փլամմերն է, որը 2012 թվականին «Օսկար»-ի արձանիկի է արժանացել «Երկրորդ պլանի լավագույն դերասան» անվանակարգում:

Ռեժիսորներից ամենաշատը արձանիկի է արժանացել Ջոն Ֆորդը՝ստանալով 4 մրցանակ:

«Օսկար» մրցանակաբաշխության պատմության ընթացքում 5 կարեւորագույն մրցանակներին միաժամանակ արժանացել է 3 ֆիլմ՝ «Դա տեղի է ունեցել մի անգամ գիշերը» (It happened one night - 1934), «Թռիչք կկվի բնի վրայով» (One flew over the cuckoos nest - 1975) եւ «Գառնուկների լռությունը» (The silence of the lambs - 1991):

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՉԻՖԼԻԿՅԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՎ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի նկարիչների միությունը, արժեւորելով բեմանկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Արշալույս Չիֆլիկյանի թողած մշակութային ժառանգությունը, ցուցահանդեսով կներկայացնի նրա բազմաբնույթ աշխատանքները:

Ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա մարտի 22-ին:

Արշալույս Չիֆլիկյանը երեւույթ է հայ կերպարվեստում. նկարիչ, գրող, հանրագիտակ, հմուտ մանկավարժ, որի մարդկային ու մտավոր արժանիքները բարձր են գնահատել ժամանակակիցները:

Նրա ներկայությունը կար մշակույթի տարբեր ոլորտներում՝ նկարչություն, թատրոն, պոեզիա, դրամատուրգիա եւ այլն:

Արշալույս Չիֆլիկյանը դպրոց է հաճախել 13 տարեկանում: Ուսումնառության տարիներին ապրել է Գայֆեճյանի բնակարանում: Այդ շրջանը հարուստ է եղել մտավորականության հետ հանդիպումներով՝ գրողներ, արվեստագետներ, երաժիշտներ, դերասաններ, գիտնականներ, հասարակական գործիչներ եւ այլք: Դա մեծ ազդեցություն է թողել նրա վրա: Ընդունվել է «Գեղարդ» նկարչական ուսումնարան, որտեղ դասավանդում էին հայ կերպարվեստի ճանաչված անունները՝ Սեդրակ Առաքելյանը, Ստեփան Աղաջանյանը, Գաբրիել Գյուրջյանը, թատերական նկարչության գծով՝ Ստեփան Թարյանը:

1936 թվականին ավարտել է ԵԳԱՏ-ը: 1953 թվականին Հրաչյա Ղափլանյանը նրան հրավիրում է Երեւան՝ Պատանի հանդիսատեսի թատրոն՝ ձեւավորելու Գրիգոր Յաղջյանի «Ոսկի քաղաքը» պիեսի ներկայացումը: 1938-1953 թվականներին եղել է Մցխեթի պետական թատրոնի, 1953-1956 թվականներին՝ Երեւանի պատանի հանդիսատեսի կինոթատրոնի բեմանկարիչ, 1956-1974 թվականներին՝ նկարիչ-բեմադրող հայկական հեռուստաստուդիայում: Ձեւավորվել է Գաբրիել Սունդուկյանի «Խաթաբալա», Շիլլերի «Ավազակներ», Գրիգոր Յաղջյանի «Ոսկի քաղաք», Գայդարի «ՌՀԽ», Նար-Դոսի «Ես եւ նա», Ալեքսանդր Արաքսմանյանի «Մեսրոպ Մաշտոց», Բ. Նուշիչի «Երկու գող» բեմադրությունները, «Սայաթ-Նովա» ֆիլմը:

Արշալույս Չիֆլիկյանը նաեւ տիկնիկային ներկայացումների ձեւավորումներ է իրականացրել: Ստեղծել է բնապատկերներ, դիմանկարներ, թեմատիկ պատկերներ:

Չիֆլիկյանը կարծում էր, որ նկարիչը պետք է լիակատար ազատություն ունենա, ինչի համար անհրաժեշտ է տիրապետել իմացաբանությանը (գնոսեոլոգիա), գեղագիտությանը (էսթետիկա) եւ բարոյագիտությանը (էթիկա):

Չիֆլիկյանն իր ստեղծագործական մեթոդը հետեւյալ կերպ է ձեւակերպել. «Յուրաքանչյուր գույնի մեջ կան երանգներ, որոնք արտահայտում են տարբեր տրամադրություններ՝ ուրախություն, տխրություն, կարոտ, սեր: Նկարիչը միշտ պետք է հետեւի գույնի ընտրությանը տարբեր թեմաներ արծարծելիս: Դա այն է, ինչին ես ձգտում եմ»:

Ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ մարտի 26-ը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ ԵՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանի ծառայություններով հետաքրքրված է իսպանական «Ժիրոնա»-ն:

Այս մասին գրում են ռուսական ԶԼՄ-ները: Ըստ պարբերականների՝ իսպանական ակումբը հետեւում է հայ կիսապաշտպանի ելույթներին, եւ հնարավոր է, որ Սպերցյանն արդեն գալիք ամռանը կտեղափոխվի իսպանական ակումբ:

Ավելի վաղ լուրեր կային, որ Սպերցյանի ծառայություններով հետաքրքրված է իտալական «Յուվենտուս»-ը:

ԿՄԱՍՆԱԿՑԵՆ 5 ՄԱՐԶԻԿՈՎ

Հայ ծանրորդները Թաիլանդում կայանալիք աշխարհի գավաթի հերթական փուլին կմասնակցեն 5 մարզիկով:

Թաիլանդում կայանալիք վարկանիշային աշխարհի գավաթի խաղարկությանը կմասնակցեն Անդրանիկ Կարապետյանը, Սամվել Գասպարյանը, Գարիկ Կարապետյանը, Սիմոն Մարտիրոսյանն ու Վարազդատ Լալայանը:

Հայաստանը Փարիզի օլիմպիական խաղերին կմասնակցի 3 ծանրորդով, որոնց անունները դեռեւս հայտնի չեն:

Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերը կկայանան 2024 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 11-ը: Խաղերի բացման արարողությունը կլինի բացառիկ, քանի որ առաջին անգամ է, որ այն անցկացվելու է ոչ թե մարզադաշտում, այլ Ֆրանսիայի սրտում՝ Սեն գետի երկայնքով: Փարիզը Լոնդոնից հետո երկրորդ քաղաքն է, որը երրորդ անգամ է հյուրընկալում Օլիմպիական խաղերը (1900, 1924, 2024): 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի բացման արարողությունը խորհրդանշական օր է, քանի որ 1924 թվականին խաղերի փակման արարողությունը կայացել է այդ օրը:

ՈՒԺԵՂ ՄՐՑԱԿԻՑՆԵՐ ԵՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Հովհաննես Հարությունյանի կարծիքով՝ Կոսովոն եւ Չեխիան ուժեղ մրցակիցներն են, եւ նրանց դեմ խաղը ցույց կտա ընտրանու ուժեղ եւ թույլ կողմերը:

«Ամեն խաղի մենք պայքարում ենք հաղթանակի համար, ու ես կարծում եմ, որ կարող ենք դուրս գալ Ազգերի լիգայի մեր խմբից: Եվ մենք ամեն ինչ փորձելու ենք անել, որ կարողանանք դուրս գալ»,-լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Հարությունյանը: Վերջինիս խոսքով՝ Կոսովոն եւ Չեխիան ուժեղ մրցակիցներ են:

«Մարզիչներն են ընտրել ուժեղ մրցակիցներ, որպեսզի խաղալով ուժեղ մրցակիցների դեմ՝ կարողանան տեսնել մեր թե՛ ուժեղ, թե՛ թույլ կողմերը: Մեզ համար չկա ընկերական խաղ. պետք է փորձենք հաղթել երկու խաղում էլ»,-ասաց նա:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը մարտի 22-ին Երեւանում կընդունի Կոսովոյի հավաքականին, իսկ մարտի 26-ին արտագնա մրցախաղ կունենա Չեխիայի հետ:

●Մարտի 30-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Սիդը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի՝ դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Անաստաս Միքայելյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կառաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը:

էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ավտոապահովագրողների բյուրոն ո՞ր դեպքում է հատուցում տուժած անձանց պատճառված վնասները:

Արամ Հարությունյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: Այս դեպքում Բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է միայն տուժած անձանց պատճառված անձնական վնասները:
- Վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:
- Վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ:
- Վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ), եթե նա, օրենքի համաձայն, պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ երաշխավորման ֆոնդը գոյանում է Բյուրոյի անդամների կողմից կատարվող միանվագ, պարբերական եւ լրացուցիչ վճարներից, օրենքով սահմանված այլ ձեւերով ներդրված միջոցներից, ինչպես նաեւ այն ակտիվներից, որոնցում ներդրվել են դրանք, եւ դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտներից: Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար օրենքով սահմանված նպատակներով եւ դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Թռչունը բույն է հյուսել մեքենայի ապակու վրա. հավանաբար վարորդը շատ երկար է կայանել նույն վայրում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-4 -7 +4 +9
Կոտայքի լեռներ	-8 -10 +5 +8
Կոտայքի նախալեռներ	-5 -8 +10 +13
Գեղարքունիք	-8 -13 +3 +6
Լոռի	-6 -10 +8 +10
Տավուշ	-4 -7 +8 +11
Արագածոտնի լեռներ	-8 -12 +3 +6
Արագածոտնի նախալեռներ	-5 -7 +8 +11

Արարատ	-4 -7 +11 +13
Արմավիր	-4 -8 +10 +13
Վայոց ձորի լեռներ	-3 -7 +3 +6
Վայոց ձորի նախալեռներ	-3 -7 +10 +13
Սյունիքի հովիտներ	-4 -7 +11 +14
Սյունիքի նախալեռներ	-9 -13 +7 +10
ԼՂՀ	-9 -10 +7 +10
Երեւան	2 -4 +9 +13

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.3.2024**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*